Հավելված N306
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26 -ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ և ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ
1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (23-33.8-Մ3-2) **1.2. Ենթակա և հաշվետու է** Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին: **1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետներից մեկը: **1.4. Աշխատավայրը** Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միեր Մկրտչյան 5
2. Պաշտոնի բնութագիրը **2.1.Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները** 1) իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտներում, ՀՀ տնտեսության զորահավաքային, Նախարարության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի վերաբերյալ պլանների և ծրագրերի մշակման, ինչպես նաև նրանց պարբերաբար ճշգրտման աշխատանքները, ապահովում է նշված ոլորտներում գործող օրենսդրության պահանջների կատարումը. 2) իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտների, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի վերաբերյալ ուսումնավարժությունների ծրագրավորումը, նախապատրաստումն ու անցկացումը. 3) իրականացնում է Նախարարության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ուսումնական վարժանքների անցկացման, ուսումնավարժական հավաքների և պարապմունքների կազմակերպումն ու իրականացումը. 4) նախապատրաստում և ներկայացնում է զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտների վերաբերյալ հաշվետվություններ, առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ գրություններ. 5) իրականացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ համապատասխան

հաշվետվությունների կազմումը և ներկայացումը՝ բնագավառի պետական լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
6) իրականացնում է Նախարարության անձնակազմի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտների, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի վերաբերյալ ուսուցման աշխատանքները.
7) իրականացնում է Նախարարության աշխատողների պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում.
8) համակարգում է Նախարարության քաղաքացիական պաշտպանության շտաբի և արտակարգ իրավիճակների հանձնաժողովի աշխատանքները.
9) իրականացնում է պահեստային կառավարման կետի նախապատրաստման և պատրաստականության բերման հետ կապված աշխատանքներ.
10) իրականացնում է Նախարարության պաշտոնատար անձանց և Նախարարության աշխատակազմի աշխատողների զինվորական հաշվառումը և հատուկ զինվորական հաշվառման ենթակա աշխատող պահեստազորայինների սահմանված կարգով ամրագրման հետ կապված աշխատանքներ.
11) իրականացնում է Նախարարության քաղաքացիական պաշտպանության շտաբի, զորահավաքային մարմնի, արտակարգ իրավիճակների և տարահանման հանձնաժողովների աշխատանքները, ինչպես նաև համակարգում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության «Առևտրի և սննդի», «Նյութատեխնիկական մատակարարման» և «Բույսերի և կենդանիների պաշտպանության» հանրապետական ծառայությունների աշխատանքները խաղաղ և ռազմական դրության ժամանակ համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան.
12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում Նախարարությանը և Բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնում է տարհանված բնակչությանը և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնող կազմավորումների անձնակազմին սննդամթերքով, հագուստով կոշկեղենով և այլ առաջին անհրաժեշտության ապրանքներով, նյութատեխնիկական անհրաժեշտ միջոցներով՝ համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան.
13) ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով զորահավաք հայտարարելու դեպքում իրականացնում է Նախարարության աշխատանքների անընդհատ կազմակերպման և շարունակական գործունեության իրականացման աշխատանքները՝ ռազմական դրության բնագավառի իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխան.
14) իրականացնում է Նախարարության մասնակցությունը ռազմական դրության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պետական լիազորված մարմիններ ճանաչված և այդ բնագավառներում տեսչական գործառույթներ իրականացնող մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին, շտաբային վարժանքներին, խորհրդակցություններին և

սեմինարներին.
15) իրականացնում է քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման աշխատանքները.
16) իրականացնում է քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը և դրանց ներկայացումը.
17) իրականացնում է Բաժնի գաղտնի գործավարությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
18) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության, զորահավաքային նախապատրաստության միջոցառումներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական համակարգի մարմիններին վերապահված գործառույթների շրջանակներում Բաժնի աշխատողներն ընդգրկվում են միջգերատեսչական և աշխատանքային այլ խմբերում ու հանձնաժողովներում.

Իրավունքները՝

- Օգտվել համապատասխան ոլորտներին վերաբերվող ՀՀ Նախագահի կարգադրություններից, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներից և ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերից՝ համապատասխան գործառույթներն իրականացնելու համար:
- Օգտվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներից և ՀՀ լիազոր մարմինների կողմից սահմանված մեթոդական ուղեցույցներից՝ համապատասխան գործառույթներն իրականացնելու համար:
- Օգտվել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներից և ՀՀ լիազոր մարմինների կողմից սահմանված մեթոդական ուղեցույցներից՝ համապատասխան գործառույթներն իրականացնելու համար:
- Օգտվել ՀՀ կառավարության գաղտնի և ոչ գաղտնի որոշումներից, ճշգրտել անձնակազմի կառավարման վարչության հետ նախարարության աշխատակիցների վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, պահանջել նախարարության աշխատակիցներից զինվորական գրքույկները՝ զինվորական հաշվառումն իրականացնելու նպատակով:
- Օգտվել համապատասխան ոլորտներին վերաբերվող ՀՀ օրենսդրությունից, ՀՀ վարչապետի հանձնարարականներից ու որոշումներից, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներից, ՀՀ էկոնոմիկայի նախարարի և գլխավոր քարտուղարի հանձնարարականներից ու հրամաններից և այլ իրավական ակտերից՝ համապատասխան գործառույթներն իրականացնելու համար:
- Ներկայացնել զեկուցագիր ՀՀ էկոնոմիկայի նախարարին և գլխավոր քարտուղարին՝ նախարարության պաշտոնատար անձանց և աշխատակիցների մասնակցությունն՝ ռազմական դրության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պետական լիազորված մարմիններ ճանաչված և այդ բնագավառներում տեսչական գործառույթներ իրականացնող մարմինների կողմից կազմակերպված միջոցառումներին՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին, շտաբային

վարժանքներին, խորհրդակցություններին և սեմինարներին ապահովելու համար:
• Իր լիազորությունների շրջանակներում օգտվել ՀՀ Նախագահի կարգադրություններից, ՀՀ վարչապետի որոշումներից, ՀՀ կառավարության որոշումներից, ՀՀ էկոնոմիկայի նախարարի և գլխավոր քարտուղարի հրամաններից:
• Իր լիազորությունների շրջանակներում օգտվել ՀՀ վարչապետի և ՀՀ կառավարության որոշումներից, համապատասխան լիազոր մարմինների կողմից ներկայացված գրություններից և ՀՀ էկոնոմիկայի նախարարի և գլխավոր քարտուղարի հանձնարարականներից:
• Պետական և ծառայողական գաղտնիքի մասին օրենքով սահմանված համապատասխան թույլտվության հիման վրա իրականացնել բաժնի գաղտնի գործավարությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պարտականությունները՝

• իրականացնում է նախարարության ՀՀ տնտեսության զորահավաքային, նախարարության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտներին վերաբերվող պլանների մշակման գիտամեթոդական, տեղեկատվական, մեթոդական աշխատանքների իրականացումը,
• իրականացնում է նախարարության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, ուսումնական վարժանքների անցկացման, ուսումնավարժական հավաքների և պարապմունքների կազմակերպումն ու իրականացումը.
• իրականացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ համապատասխան հաշվետվությունների նախապատրաստումը, կազմումը, այդ միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացումը նախարարի հաստատմանը և տեղեկացումը բնագավառի պետական լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.
• իրականացնում է նախարարության պաշտոնատար անձանց և նախարարության աշխատողների զինվորական հաշվառումը, հատուկ զինվորական հաշվառման ենթակա աշխատող պահեստազորայինների սահմանված կարգով ամրագրման հետ կապված աշխատանքները և պահանջվող տեղեկատվության ներկայացումը համապատասխան զինվորական կոմիսարիատ:
• իրականացնում է նախարարության համակարգի քաղաքացիական պաշտպանության շտաբի, զորահավաքային մարմնի, արտակարգ իրավիճակների և տարհանման հանձնաժողովների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության «Առևտրի և սննդի» ու «Նյութատեխնիկական մատակարարման» հանրապետական ծառայությունների աշխատանքների կատարումը,
• իրականացնում է նախարարության պաշտոնատար անձանց և աշխատակիցների մասնակցությունը՝ ռազմական դրության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում պետական լիազորված մարմիններ ճանաչված և այդ բնագավառներում տեսչական գործառույթներ իրականացնող մարմինների կողմից կազմակերպված

միջոցառումներին՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին, շտաբային վարժանքներին, խորհրդակցություններին և սեմինարներին.

• իրականացնում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության և հանրապետական գործադիր մարմինների կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության ու Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակումը, ուսումնասիրությունը, քննարկումը և մասնագիտական եզրակացությունների ներկայացումը.

• իրականացնում է մասնակցություն՝ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային կարողությունները և ունակությունները կատարելագործելու նպատակով, բաժնին վերապահված լիազորությունների շրջանակներում, միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված և կազմակերպված միջոցառումներին.

• իրականացնում է բաժնի գաղտնի գործավարությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի կազմակերպման բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ՝

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Բանակցությունների վարում
3. Կոնֆլիկտների (Սթրեսի) կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ժողովների և խարհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքի նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական և տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների, և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: